# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Լեռնանցք համայնքի ավագանու հերթական (արտահերթ) նիստի և համայնքային նշանակության միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսների, հանրային քննարկումների և այլ) վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Լեռնանցք** | Ավագանու հերթական նիստ | 15.10.2021թ. | 10:00 | **Լեռնանցքի** համայնքապետարանի նիստերի դահլիճ (գ.Լեռնանցք, 8 փող. շենք թիվ 6/4) |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. հոկտեմբերի 15-ին՝ ժամը 10.00-ին Լեռնանցքի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

**<u>ժամը՝ 10.00</u>**

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2021թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ. Լ. Աբգարյան

2. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 24-ի <<Լեռնանցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 47-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Լ. Աբգարյան

3. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

4. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

զեկ. Լ. Աբգարյան

5. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

Նախագիծ

Լեռնանցք համայնքի ավագանու 2021թ-ի
հոկտեմբերի 15-ի հերթական նիստի
օրակարգը հաստատելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է`
Հաստատել Լեռնանցք համայնքի ավագանու 2021թ. հոկտեմբերի 15-ի հերթական նիստի օրակարգը.

1. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի 2021թ. բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:

զեկ. Լ. Աբգարյան

2. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու 2020թ. դեկտեմբերի 24-ի <<Լեռնանցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 47-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

զեկ. Լ. Աբգարյան

3. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

4. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին:

զեկ. Լ. Աբգարյան

5. ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

Լեռնանցք համայնքի համայնքի 2021թ. բյուջեի
երրորդ եռամսյակի կատարման մասին

զեկ. Լ. Աբգարյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն Լեռնանցք համայնքի ղեկավարի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի ավագանու
2020թ. դեկտեմբերի 24-ի << Լեռնանցք համայնքի
2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 47-Ն
որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին մասին

զեկ. Լ. Աբգարյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 3-րդ մասով՝ և <<ՇԵՆ>> բարեգործական ՀԿ-ի կողմից Լեռնանցք համայնքի 2021թ-ի սուբվենցիոն ծրագերի համար ֆինանսական նվիրաբերության պայմանագիրը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է

1. Լեռնանցք համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 24-ի << Լեռնանցք համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 47-Ն որոշման մեջ կատարել հոդվածի փոփոխություն՝

ա/ 26/12/00 դասակարգման /նվիրատ ժառանգ. իրավ. ֆիզ. անձ/ հաշվի համարը պակասացնել 3000000 (երեք մլն) դրամով:
բ/06/03/01 դասակարգման /խմելու ջրագծի մատակարարում/ հաշվի համարը ավելացնել 3000000 (երեք մլն) դրամով:

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սեփականություն
հանդիսացող հողամասերից աճուրդով
օտարելուն համաձայնություն տալու
և մեկնարկային գին սահմանելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 67-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով`

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Լեռնանցք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից (համաձայն հավելվածի) աճուրդ-վաճառքով օտարելուն:

2. Աճուրդ-վաճառքով գույքը ձեռք բերած անձին՝ կատարել համայնքապետարանի կողմից փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ
Հավելված 1

# Լեռնանցք համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի օտարման իրավունքի մրցույթ

| Հ/Հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Հողամասի մակերեսը /հա/ | Հողամասում առկա շինության անվանումը և մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը/ կարգը | Հողամասի օտարման մեկնարկային գինը (դրամ) | Հողամասում առկա շինության օտարման մեկնարկային գինը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | 1 | Լեռնանցք | 06-040-0012-0002 | 0.1161 | - | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 464400 | - |
| 1. | 2 | Լեռնանցք | 06-040-0021-0006 | 0.12492 | - | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 499680 | - |
| 2. | 3 | Լեռնանցք | 06-040-0023-0006 | 0.13324 | անավարտ կիսանկուղ / 119,14 քմ | բնակավայրերի | բնակելի կառուցապատման | 532960 | 220000 |

Նախագիծ

Լեռնանցք համայքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերից մրցույթով վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետով, 76-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Լեռնանցք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-040-0207-0054 ծածկարից որպես առանձին գույքային միավոր առանձնացված հատակագծին համապատասխան 0.64929 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողը (համաձայն հավելվածի) մրցույթով վարձակալությամբ տրամադրելուն՝ 25 տարի ժամկետով:
2. Մեկ քայլի արժեքը սահմանել հողամասի մեկնարկային գնի 10%-ի չափով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ

Լեռնանցք համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի վարձակալության իրավունքի մրցույթ

| Հ/Հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Հողամասի մակերեսը /հա/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը/կարգը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Վարձակալության իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը (դրամ) | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | 1 | Լեռնանցք | 06-040-0207-0054-հց | 0.64929 | գյուղատնտեսական | վարելահող / III | վարելահող | 25 | 9500 | առանց կառուցապատման իրավունքի |

ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք համայնքի սոցիալապես
անապահով ընտանիքներին սոցիալական
օգնություն հատկացնելու մասին

զեկ. Լ. Աբգարյան

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 07-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնանցք համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Լեռնանցք համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Նախագիծ

**Հավելված 1**

**ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ**
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ**

1. Մելիքսեթյան Արթուր Մ. ---- 20000 (քսան հազար) դրամ /սոց. օգնություն/.
2. Բադալյան Սիրանուշ Գ. ---- 20000 (քսան հազար) դրամ /սոց. օգնություն/.
3. Վարդանյան Սերյոժա Մ. ---- 20000 (քսան հազար) դրամ /սոց. օգնություն/.
4. Պողոսյան Լուսինե Գ. ---- 20000 (քսան հազար) դրամ /սոց. օգնություն/.